

**«Չաարատ Կապան» ՓԲԸ կողմից նախատեսվող Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Նախատեսվող գործունեություն) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**07.08.2023թ.**

**ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2023 թվականի օգոստոսի 1-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ «Չաարատ Կապան» ՓԲԸ կողմից նախատեսվող Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Նախատեսվող գործունեություն) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Չաարատ Կապան» ՓԲԸ վարչական տնօրեն՝ Էդգար Հովհաննիսյանը, հանրային կապերի մենեջեր՝ Արփինե Հարությունյանը, բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանը, «Ակունք-Ֆիրմա» ՍՊԸ տնօրեն՝ Հովիկ Նիկողոսյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև «Չաարատ Կապան» ՓԲԸ այլ աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2023 թվականի հուլիսի 21-ի թիվ 130 (6902) համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի /kapan.am/ հայտարարություններ բաժնում:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Ակունք-Ֆիրմա» ՍՊԸ տնօրեն՝ Հովիկ Նիկողոսյանին:

**Զեկույց (Հովիկ Նիկողոսյան)**- խոսքը գնում է Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության մասին: Գեղանուշի պոչամբարը նախագծվել է 1962թ. «Մեխանորբ»



նախագծային ինստիտուտի կողմից, ապա այնուհետև չի աշխատել 1984թ-ից և Կապանն ու Քաջարանը միացան իրար: Սակայն 2006թ-ից Գեղանուշի պոչամբարը վերականգնեց նախատեսվող նախագիծը, որի հիման վրա էլ մինչև հիմա աշխատում են: 2006թ-ից անցել է 17 տարի և ընկերությունը որոշեց պատնեշի կայունությունը հաստատել՝ մինչև անգամ բարձրացնել: Այս պահին պատնեշը կայուն է, սակայն 851 նիշ բարձրացնելու դեպքում լրացուցիչ կայունության կարիք կունենա: Այդ պատճառով լրացուցիչ ամրացում է նախատեսվում: 20մ պատվարի բարձրացում պետք է կատարվի, բացի այդ էլ անհրաժեշտ կլինի ամրապնդել պոչամբարի պատնեշը: Դրա հիման վրա արվեց նախագիծ, որով փոփոխություններ կարվեն ըստ նախագծի: Պատնեշի բարձրացման դեպքում աշխատանքները պետք է կատարվեն փուլ առ փուլ: Առաջին փուլով կբարձրացվի 2.5մ 2.5մ բարձրություններով և երկրորդ փուլով՝ ևս 2.5մ 2.5մ բարձրություններով: Ընդհանուր 851 նիշին հասնելու նպատակով:

Պատնեշի ամրության կայունությունն ապահովելու համար նախատեսված է իրականացնել նաև ամրաբեռնում դատարկ ապարներով: Փոփոխությունները կիրականացվեն առանց ծավալների մեծացման:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** – Ըստ նախագծի նախատեսվում է պատնեշի բարձրացում, ինչպե՞ս կկատարվեն պատնեշի ուժեղացման աշխատանքները:

**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Նախ ասեմ, որ պատնեշը բարձրացվում է դատարկ ապարներով: 2.5 մետրից էլ որ լցակույտը բարձրացվի՝ խողովակը բեռնաթափում կիրականացնի համաչափ կիսախողովակներով: Պոչերը լցվելու են պոչամբար, խոշոր մասնիկները հավաքվում են սկզբնամասում, իսկ մանր մասսան տեղափոխվում է ջրային հայելի:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** – Բացի նախատեսվող բարձրացմանը՝ կկատարվեն արդյո՞ք պոչամբարի պատնեշի ամրացման և ուժեղացման աշխատանքներ:

**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Այսօրվա պատնեշը նախագծով կայուն է: Այսօր կայունությունը տրվում է 1, 1.2, իսկ մենք հասնում ենք մինչև 1.5-ի ամրաբեռնման: Բայց ինչի՞ մենք նորից գնացինք պատնեշի կայունությունը հաստատելուն, որովհետև մեր եղածի վրա 20մ էլ բարձրանում ենք: Մինչև այդտեղ ծավալը տրված էր 17.4մլն կուբամետր, այսինքն նախագծով այդքան տրված էր, այդքան պետք է լցնենք, բայց գործարանը որոշեց կայունությունը ևս ստուգել մինչև բարձրանալը: Այսինքն՝ բարձրանալու համար ենք տվել պատնեշի կայունության ավելացումը:



**Հարց (Գոռ Թաղևոսյան)** – Երբ հարավային պատնեշի բարձրացումն իրականացնեք արդյո՞ք ջրահեռացման թունելի հետ կապված խնդիրներ չենք ունենա և այնտեղ թունելը երկարացնելու խնդիր չի առաջանա: Արդյո՞ք ուսումնասիրվելու է այդ հարցը:

**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Չի փոխվելու թունելի ո՛չ կտրվածքը, ո՛չ երկարությունը, ո՛չ արագահոսը:

2006թ-ից արդեն նախատեսվել էր, որ պոչամբարը պետք է բարձրանա մինչև 851 մ, դրա համար թունելի ջրահեռացման կառույցները դեպի Գեղանուշի գետ այնպես էր նախատեսված, որ վերջին բարձր կետը ապահովի ջրահեռացում դեպի Գեղանուշի գետ:

**Հարց (Անդրանիկ Հովակիմյան)** – Թունելների հետ կապված խնդիրներ ենք տեսնում, այսինքն թունելը և պոչամբարը մի ընդհանուր համակարգ են: Թունելի վիճակի վերաբերյալ մենք նախկինում ևս բարձրաձայնել ենք, որ անհրաժեշտ է ուսումնասիրություն կատարել իմանալու թունելը ի՞նչ վիճակում է, արդյո՞ք ժամանակին բացթողումներ չեն եղել: Կխնդրենք, որպեսզի նախագծի մեջ նաև ուսումնասիրվեր թունելն ամբողջությամբ, որովհետև միայն պոչամբարն ամրացնելով թունելում խնդիր առաջանալու դեպքում կարող է հայտնվենք զրոյական իրավիճակում: Այդ պատճառով անհրաժեշտություն ենք գտնում թունելն ամբողջությամբ ուսումնասիրել:

**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Թունելը մեկ անգամ չէ որ ուսումնասիրվել է:

**Հարց (Գոռ Թաղևոսյան)** – Ե՞րբ է ուսումնասիրվել:

**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Ինչքան գիտեմ այնտեղ սալիկների հարց կար, որոնք վերականգնվել են 1 անգամ ռուսների ժամանակ, 1 անգամ էլ 2 տարի առաջ:

**Լրացում (Անդրանիկ Հովակիմյան)** – Այդ պատճառով մենք առաջարկում ենք ուսումնասիրել և հաջորդ հանրային քննարկմանը տեղեկացնել, թե արդյո՞ք խնդիրներ չկան և, եթե առկա են, ապա ներառել նախագծում:

**Լրացում (Գոռ Թաղևոսյան)** – Անհրաժեշտ է իրականացնել ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում այս նախագծով թունելում ամրացման և ուժեղացման աշխատանքներ նախատեսել:

**Լրացում (Աիդա Ալեքսանյան)** – Թույլ տվեք մի փոքր ավելացնեմ: Ամրաբեռնման նախագիծը հարավային պատվարի կատարվող ուսումնասիրությունների արդյունքում ցույց է տվել, որ ամրաբեռնումը այնպես է կատարվում հարավային պատվարի, որ թունելի լրացուցիչ երկարության անհրաժեշտություն չկա: Չուտ որպես փաստ արձանագրեմ:

**Հարց (Գոռ Թաղևոսյան)** – Հարց ունենք պոչամբարի ռեկուլտիվացման հետ կախված:



Այստեղ նշված է, որ տեխնիկական ռեկուլտիվացիայի դեպքում մեմբրանային շերտի վրա ստեղծել 40 - 50սմ դրենաժային շերտ: Մենք կարծում ենք, որ սա արդյունավետ չի լինելու, որովհետև ժամանակի ընթացքում քայքայվելու են դատարկ ապարները և առաջարկում ենք փոխարինել խիճով:

**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Պոչամբարը ավարտելուց հետո վրայի ջուրը հեռացվում է, հարթեցվում է պոչամբարը, փռվում գեոմեմբրանային շերտ 1.5 մմ հաստությամբ, որ անձրևաջրեր գալուց չխառնվեն պոչամբարի ջրի հետ: Վրեն դատարկ ապար է լցվում, որ անձրևաջրերը գան, կուտակումներ չառաջացնեն, ինչպես նաև տալիս են թեքություններ: Դրանից հետո 20-25 սմ առնվազն հողի բերրի շերտ է լցվում, որը մենք այսօր պոչամբարի տարածքից հանում, տանում ու կուտակում ենք՝ հետագայում ցանք անելու նպատակով:

**Լրացում (Գոռ Թադևոսյան)** – Պարոն Նիկողոսյան, մենք այդ ամեն ինչին լավ ծանոթացել ենք և հարց ունենք նաև բերրի հողի հետ կապված: Խոսքը վերաբերում է նրան, որ դատարկ ապարները կքայքայվեն և իրենց ֆունկցիան որպես դրենաժ չեն կատարի: Առաջարկում ենք, որ դրենաժը լինի խիճից: Ինչպես դուք նշեցիք, դրենաժի վրա 15-20 սմ հաստության բերրի հող կլցվի, մենք կարծում ենք, որ դա էլ է քիչ և առաջարկում ենք այդ հողի բերրի շերտի հաստությունը լինի կես մետրից ոչ պակաս:

**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Հայաստանում միայն մեկ տեղ է, որ բերրի շերտը 0.5մ է, մենք ամբողջ Հայաստանում 20-30 սմ ենք արել: Կապ չունի, եթե անհրաժեշտ է մենք 0.5 մ կանենք: Եվ նաև, ինչ վերաբերում է դատարկ ապարների քայքայվելուն խիճի հետ, ասեմ, որ դատարկ ապարների մեջ կվարցը, SiO2-ը հասնում է 70-80%-ի, նույն համարյա խիճն է, կարող ենք դա էլ անել:

**Լրացում (Գոռ Թադևոսյան)** – Ամեն դեպքում խիճն ավելի արդյունավետ է աշխատում:

**Լրացում (Անդրանիկ Հովակիմյան)** – Կարելի է խիճ անել ավելի քիչ ծավալով, 0.5մ չէ, թող 25-30 սմ լինի:

**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Հաշվի առնենք, որ տարեկան 500մմ անձրև է գալիս, և, եթե բարձր ինտենսիվությամբ տեղումներ լինեն, ապա հնարավոր է այդ 25-30 սմ շերտը չտեղափոխի, այլ ողողի մակերեսը:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** – Այստեղ ներկայացված է նաև խոշորացված հաշվարկ ռեկուլտիվացիոն աշխատանքների համար և մենք մտավախություն ունենք, որ նախատեսված գումարը հնարավոր է չբավականացնի: Ուստի կխնդրենք վերանայել և հաջորդ հանրային լսմանն ավելի մանրամասն ներկայացնել:



**Պատասխան (Հովիկ Նիկողոսյան)** – Քանի որ ՇՄԱԳ է արվել՝ ստացվում է ծրագիր, այնուհետև կազմվում է նախագիծ, որտեղ սմետան է հաշվվում, տեխնիկան է հաշվվում, քանակները, բոլորը հաշվվում են: Քանի որ ինֆլացիան առաջ է գնում, դրա համար մենք մոտավոր թիվ ենք գրում, իսկ այդ թիվը որ մենք տալիս ենք, ամեն տարի քաղշինը դոլլարի կուրսի համեմատ դրամի արժեքով է հաշվարկում:

**Լրացում (Գոռ Թադևոսյան)** – Վերանայեք և ավելի մանրամասն ներկայացրեք:


**Հարց (Հովիկ Նիկողոսյան)** – Այսինքն՝ կալկուլիացիան ավելի մանրամասն ներկայացնե՞նք:

**Պատասխան (Գոռ Թադևոսյան)** – Այո, նաև վերանայեք, թե արդյո՞ք աշխատանքների կատարման համար գումարը կբավականացնի:

**Ամփոփում (Գոռ Թադևոսյան)**- Եթե այլ հարցեր չկան, ապա այսօրվա հանրային քննարկումը համարենք ավարտված: Շնորհակալություն եմ հայտնում բոլորին մասնակցության համար:

Հանրային քննարկման պատասխանատու՝

Կապան համայնքի ղեկավար




Վևորգ Փարսյան

Ձեռնարկող՝


«Չաարատ Կապան» ՓԲԸ գլխավոր տնօրեն  Դավիթ Թովմասյան

Հանրային քննարկման վարող՝

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ  Գոռ Թադևոսյան

Հանրային քննարկման արձանագրող՝

Կապանի համայնքապետարանի

գյուղ. և բնապահ. բաժնի առաջատար մասնագետ  Աստղիկ Մկրտչյան